այս անողորմ հարուածին առաջն առնուլ, ինչպէս պիտի մոնայ այս աւերման գաղտնեացը մէջ զանոնք փճացընելու համար։ Թումբ մը ուսկից անցնիլը անկարելի ըլլայ, թումբ մը որ այսուհետև կարող ըլլայ թէ զերծիթը և զդղեակը, թէ արտը և թէ պարտէզը պահպանելու այս արշաւանքներէն որ չար ևս են քան զՆորմանդացւոց արշաւանքը, երբոր բովանդակ ժողովուրդը կ'աղաղակէր աղօթքներուն մէջ. « Ի բռնութենէ Նորմանդացւոց ազատեա զմեզ, Տէր ». (A furore Normanorum, libera nos Domine)։ Ահաւասիկ այս է աշխատութիւնը, այս է գտնալու արժանի բանը. ինչուան որ այս զօրաւոր թումբը չգտնուի, պիտի խնտանք հնարագիտաց տկարութեանը և անշահութեանը վրայ։ Ցիրաւի կարծեմ որ եթէ տեսած ըլլային երկնաահան անձրևներուն առատութենէն զայրացած հեղեղներուն աւերմունքը, եթէ ականատես ըլլային այն գիշերային և ցորեկուան ապականութեանց՝ զորոնք և ոչ մէկ գրիչ մը կրնայ ստորագրել և ոչ ձայն մը պատմելու. եթէ տեսած ըլլային փրփրալից կոհակներուն մէջէն ծերուն խշտեկին և տղուն որորոցին անցնիլը, տղան որ կը ժպտի վտանգին մէջ և պըղտիկ ձեռուքները կ'երկընցընէ դէպ 'ի մօրը որ տանը փլատակներուն տակ ընկղմեր է. եթէ լսած ըլլային այն աղաղակները և այն լռութիւնները որ հաւասարապէս սարսափելի են, այն աղօթքները և այն հայհոյանքները որ մի և նոյն սրտերէ կ'ելլան, մեր ճարտարները չէին մնածեր ամենևին փայտէ ձիեր շինելու, այլ կը ջանային այնպիսի ամուր տախտակէ պատուարներ կանգնել, որ կարենային ըսել արշաւասոյր ջրերուն. « Ասկէ անդին պիտի չերթաք »։ Երկնքի ճարտարապետին համար աւազի հատիկ մը բաւական եղած է մշտնջենապէս սանձելու զմոլեգին ովկիանոսը։

Բայց, գոհութիւն Աստուծոյ. եթէ թումբերը չեն կրնար դիմանալ ողողմունքին, եթէ բան մը չկրնար արգիլել այս լեռներէն իջած կատաղի հեղեղնեբուն թափը, և եթէ անհրաժեշտ պէտք է որ երբեմն երբեմն դաշտերուն բերքերը կորսուին և սուրբ եկեղեցիք ալ կործանին, որպէս զի մոռացկոտ մարդիկ աղաչաւոր ձեռուքնին երկինք վերցընեն. եթէ այս է հարկը որ մայրերը յափշտակեն իրենց զաւակները մրրկին մէջ, և յուսահատեալ որդին իր կենաց վտանգովը ազատէ ծեր ծնողքները որ կ'ըսեն իրեն. « Գնա՛, ասկից հեռու փախիր, թող որ մեռնինք », կայ թումբ մը որ չտապալիր, անընկճելի արգելք մը, գրեթէ աստուածային ամբարտակ մը ընդդէմ այս աշխարհաւեր հարուածներուն, ոյժ մը զօրաւոր քան զամենայն մարդկային ոյժ, գիւտ մը որուն առջև բոլոր գիւտերը կը խաւարին, միով բանիւ փառք մը որուն բրաբիոնն յերկինս է... Ողորմութիւնը, ողորմութիւնը որ կ'ազատէ և կը նորոգէ։ Ինքն է զօրութիւն և ապաւէն, յոյս և խորհուրդ, ինքն է մխիթարութիւն և քաջութիւն, ներկայիս և ապառնւոյն, և յԱստուծոյ կու գայ։

ԿԱՐՈԼՈՍ ՎԱԼԻԻ

Խմբագիր Musée des Familles

Օրագրին։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՑԱՐԵՒԵԼՍ

Սէյլան կղզւոյն արտաւար փիղերը. — Կալկադայ նահանգին խարիշիկներուն յուղարկաւորութեան կերպը։

Պ. Օնտրաշի, Հունգարացի աղնուական կոմսը, կը պատմէ որ 1847ին մինչ բովանդակ Հունգարիա ապստամբութեան մէջ էր, օր մը լրագիր կարդալու ժամանակ միտքը դրաւ որ ճամբորդութեան ելլէ այրեցած գօտւոյն տակը և դէպ 'ի յարևելս՝ մարդկութեան խանձարուրքը դիտելու համար։ Այս մնածութեանը երրորդ օրն չիտակ վեն-

նա գնաց, և ամեն մը եղբը Լոնտրա անցաւ և անկէց ալ Հնդկաստան. (110 լիրէ ստէրլին ճամբու ծախք ընելով)։ Պ. Օնտրաշին ամենահարուստ ճանապարհորդ մ'է. իր մեծագոյն զուարճութիւններէն մէկն է որսորդութիւնը, և անոնց մէջ ալ վայրագ կենդանւոյ որսը, որ շատ վտանգաւոր է և իր պատմութեանցը մէջ անոր ցնասակարութեանը անբաւ օրինակներ կը գտնուին։ Շատ տեսակ կերպեր կը պատմէ փղի որսորդութեան համար օրինակներով հանդերձ. և ինչպէս որ զէնքով ճարտար է իր նպատակին հասնելու, ոչինչ նուազ ճարտար է նաև նկարչութեամբ տեսածները գծագրելու։ Երբ Սէյլան կղզին առաջին անգամ գնաց դիտելու, և Նաէրա–Էլիային լեռնոտ սահմանները հասաւ, հոն առաջին անգամ փիղ մը տեսաւ՝ զոր ծովուն երեսէն 6000 ոտք բարձր երկիր հերկելու կը գործածէին։

« Արևը մարը մտեր էր, կ'ըսէ, և լայն ու ընդարձակ դաշտագետնոյն մէջ մը շակներ կը տեսնուէին որ դեռ կը քշէին ու կ'աշխատցընէին իրենց բոլոր օրուան աշխատութենէն յոգնած դաղրած փըղաց ամբոները։ Լաւ ևս դիտելու համար զտեսարանը՝ գեղեցիկ դիրք մը քաշուելով՝ ձիէս վար իջայ, և սկսայ ուղևորութեան տետրիս մէջ գծագրել զայն։ Խոտերով բռնուած ու կապուած կոշտ հողերը ետևէ ետև խաւ խաւ կը բռնէին վրայ կը դառնային, և կենդանիներն այնպէս արագ արագ պաշտօննին կը վարէին ու երկիրը կը պատռէին, որ իրենց վարողը՝ գռուզ ու խիտ մազերով Մալապարցի մը՝ հազիւ հազ իրեն սրածայր շիշովը կրնար զանոնք զսպել։ Արօրը կառավարողներն երկու հոգի էին, և մեծ զգուշութեամբ կը գործէին որ չըլլայ թէ ակօսէն դուրս ելնէ ու խոտորի։

» Շատ կը զարմանամ, կ'աւելցընէ հոս Պ. Օնտրաշի, որ Աւստրիացի և Իռլանտացի գաղթականներն Ամերիկա և Բարի յուսոյ գլուխը կ'ելնեն կ'երթան, մինչ անդին Նաէրա–Էլիա իր գեղեցիկ կլիմայովն և երկրին բարերերութեամբը, յորում Անգղիոյ բնակչաց կէսը կրընայ ընդունիլ, գաղթականութեան մէկ հատիկ հաճելի և արգաւանդաւոր երկիր մ'է »։

Այս երկիրներուս վրայօք շատ հետաքրքրեցին ճանապարհորդք մանրամասնաբար մեզի տեղեկութիւն տուած ըլլալնուն համար, հիմա ընթերցողաց ըսելու նոր բան մը չմնար. ուստի թողլով բոլոր զանոնք՝ անոնց մէջէն միայն աչքի զարնելու այս նկարագրութիւնս առնունք ու գնենք հոս։

« Կալկաթա հասնելէս երեք օր ետքը, կը շարունակէ հեղինակը, առաւօտը ժամը վեցին քաղաքը շրջագայելու ելայ։ Հուկլի գետոյն եզերքէն երթալու ատենս բոլոր ժողովուրդն ոտքի վրայ տեսայ. աչքս ո՞ր կողմն որ դարձընէի՝ գործունէութենէն զատ ուրիշ բան չէի տեսներ. վաճառականներն իրենց կրպակներն էին, արհեստաւորներն ալ իրենց գործատունները. ուներներն անգամ որ առանց աշխատանաց պատրաստ կը գտնեն ապրուստնին՝ ոմանք ձիով և ոմանք կառք աստիս անդին իշխանաբար ճեմելով՝ առաւօտեան զով և մաքուր օդը կը ծծէին։ Մի և նոյն շարժմունքն և կենդանութիւնը կը տեսնուի նաև քաղաքին դրսի դին. ճամբան եկող գնացող ամբոխով խառնեալ ըլլալով, մարդ դըժուարաւ կրնայ զայն ճեղքել ու անցնիլ երթալ իր բանը։

» Մէկ մղոն ու կէս գետեզերաց վրայէն ճամբայ ըրեր էի, մինչ նոր տեսակ հոտ մը հոտոտելեացս եկաւ զարկաւ. անհարթ ու բաւական բարձր պատի մ'ետևէն ծխոյ դիզադէզ ամպ մը վեր բարձրանալով բովանդակ օդը կ'ապականէր իր դարշելի հոտովը։ Բայց աւելի զարմանալին այն էր որ սոյն պատին երկայնութեանը վրայ դիշակեր թռչնոց ահագին բազմութիւն մը թըմբրած կեցեր էր, որք աղտեղութեամբ և դիակներով կը սնանին. և էին անփետուր վզով անդղեր, թուխ արծիւներ, այլ և այլ գոյներով և մեծութեամբ բա-

զէներ, մինչև ուռած տկուած պզտի ցիներ ալ. զաոնք բոլորը տեսնելով՝ պրժգացի ու աչքս անդին դարձուցի։ Ոմանք այնչափ կերեր ու ծանրացեր էին որ ոտքի վրայ չկարենալով կենալ՝ անշարժ տեղերնին թաուեր մնացեր էին. իսկ ոմանք կերածնին մարսելու համար թևերնին կը բախէին ու կը քրտնէին. ուրիշներն ալ իրենց աղտոտ և մրճոտած փետուրնին կտուցով մաքրելու հետ էին։

» Այսոնք ամենևին անցաւորաց նեղութիւն մը չեն պատճառեր. այլ որ և է տեղ անխոռով կը կենան, կը քնանան, փետուրնին կը լուան, և այլն։ Կառքս կեցընել տուի հոն տեղեկանալու այս բանիս պատճառն և իմանալու այն ծխոյն ինչ ըլլալը որ պատին ետևէն անդադար վեր կ'ելնէր։ Եւ իմացայ որ մեռելոց դիակներն հոն կ'այրեն եղեր Հնդկաստանի այն կողմի ժողովուրդը, որուն հետևանքն էին ծուխն ու գիշակեր թռչուններն։

» Եւ իրաւցընէ այն թաղին տեղացիք իրենց մեռելներն հոն կը բերեն կ'այրեն, մանաւանդ թէ կը տապկեն, ըսենք. վասն զի դիակը բոցէն քիչ մը սենալուն պէս, մէկէն կրակէն վար կ'առնուն զայն և Հուկլի գետոյն սրբարան ալեացը յանձնելով՝ անոր մէջ կը նետեն։ Գետեղերաց վրայի թռչուններն ալ աչուընին սրած՝ կտուցնին բաց՝ այն վայրկենին միայն կը սպասեն, այնպէս որ գետեղերքը կեցած մեռելին ազգականներն որոշ կրնան տեսնել թէ որ անդամէն կը սկսին նախ գիշակերներն իրենց աւարը յօշել, բզբքոտել ու մերկացընել բոլորովին դիակին միսը, թողով միայն զկմախքը։

» Անմիջապէս նոյն միջոցին դիակ մը գետափին վրայ զետեղած ըլլալով՝ թռչուններն անոր վրան թափած՝ սկսեր էին իրենց կռիւը. և որպէս զի ինչպէս որ պէտք է լաւ կարենամ դիտել այն նորանշան տեսլարանը՝ քիչ մ'աւելի անոնց քով ուզեցի մօտենալ, և կոխկրտելով մարդկային ոսկերաց կոյտերը որ ասդիս անդին ցիր ու ցան սրփռուեր էին, գնացի գրեթէ երկու քայլափ հեռու կեցայ այն տեղէն ուր անդամաղենական դիտողութիւնը կը դրծադրուէր. այսչափս ալ բաւական սեպելով ուզեցի գիտնալ նաև թէ ո՞ր տեսակ թռչունն աւելի ճարտար ու յաղողակ է զդին կլլելու կողմանէ, և տեսայ որ արագիլ մ'էր իրեն մեծ և երկայն խածիովը։ Այն երևելի անդամաղենին բաւականապէս Եւրոպիոյ արագլին կը նմանի, բայց աւելի ուժով է և մեծդի։ Զորս ոտք բարձրութիւն ունի. միայն կտուցին երկայնութիւնն է մէկ ոտք, որ քարի պէս պինդ է, և հետևաբար յարմարագոյն յօշելու իր աւարը, որով շուտ և ամենադիւրաւ կը հանէ մէջտեղէն իր բաժինը. մէկ անգամով կրնայ մինչև ամբողջ կատու մը կուլ տալ, որ ստամոքսը իջնելէն առաջ՝ վրին տակը կախուած պարկին մէջ կը մնանէ, և յետոյ հոն կենալէն և լաւ մը կակղնալէն՝ կենդանին նորանց կը ծամէ զայն և յետոյ վար ստամոքսը կը ղրկէ։

» Եւ այսպէս թռչունն ալ մանանկից կ'ըլլայ այն գերագոյն առանձնաշնորհութեանը, որով անվեհեր կրնայ փողոցներուն մէջ մարդկանց հետ ժուռ գալ, առանց մէկէ մը ցնաս կրելու. մանաւանդ թէ ընդհակառակն մանաւոր պատիժ ալ սահմանուած է՝ անոր որ և է կերպով ցնաս հասցընողին, և զանիկայ սպաններն իրենց համար մեծ եղեռն է։ Միով բանիւ Կալկադա քաղաքը որչափ բարիք ալ ընէ այս թռչնոցս՝ նորէն նուազ է նկատմամբ թռչնոց առ քաղաքը ցուցած երախտեացը։ Վասն զի իրենք են որ աղտեղութեանց մէջէն կը ժողվեն ու դուրս կը հանեն մոյ և ուրիշ ապականելեաց մնացեալ կտորուանքը, ապա թէ ոչ առանց իրենց՝ այն աղտեղութիւններն բնակչաց ծուլութենէն և անհոգութենէն փողոցներուն վրայ խռնելով, թէ պիտի խցէին զանոնք, և թէ՝ որ մեծագոյնն է՝ օդը ապականելով այնպիսի յարատև գարշահոտութիւն մը պիտի ձգէին որ անտանելի կ'ըլլար։

« Բայց այս երկու ճիրաններով աւելածուներն անգամ գիտեն և կամ

կը ճանչնան ըսենք իրենց կարևորութիւնը և օգտակարութիւնը. քաղաքապետին պալատն իրենց բնակութեան տեղ սահմանուած է։ Պատուհանէս՝ որ անմիջապէս պալատին կը նայի՝ քանի քանի անգամ՝ տեսեր եմ այս թռչնոց անպատշաճութիւնները, որ ազատ համարձակ կը թռչին կ'երթան բրիտանական առիւծոյն գլխոյն վրայ խուռն կը դիզուին, և առաւօտեան դէմ պալատին երդիքը կը ժողվուին։ Նոյն իսկ քաղաքապետն մեծ յարգանք կ'ընծայէ այն իրեն պատուոյ պահապանացը, վասն զի չհամարձակիր և ոչ անգամ մը երթալու և նայելու պատուհանէն անոնց անվայել հետևանքը որ իրեն պալատին երդեացը վրայ կ'ելլուի։ — Մինչև 5–6 հազար կը համրուին այս թռչուններս։

» Ականջիս յանկարծ ճարճատման շառաչիւն մը զարկաւ. ետևս դարձայ և ահա տեսայ որ բոցոյն վրայ դիակ մը դեռ նոր դրեր կը տապկէին։ Արդէն ուրիշ երկու դիակներ ալ դրուեր էին անդին կրակին վրայ, և զկրակարանն երկու ոպնիազանման սև մարդիկներ անդադար կը գրգռէին ու կը զայրացընէին, անոր բոլորտիքն ալ ուրիշ դիակներ կային, որոցմէ ոմանք յարդի՝ ոմանք ալ գետնոյ վրայ հանգչեցուցած՝ կարգն իրենց գալուն կը սպասէին։ Ասոնք ամենն ալ բոլորովին մերկ էին 'ի զգեստուց. և մինչ ոմանք 'ի պատիւ և 'ի նշան սիրոյ իրենց ազգականաց մարմիններն այրելու հետ էին, ուրիշներն ալ զանոնք ջուրը նետելով կը շատանային։

» Բայց չկարծենք որ այդ արարողութիւնը պզտի նմանութիւն մ'ունենայ ինչ որ հին Հռոմայեցիք նոյն դիպուածին կ'ընէին։ Անոնց ըրածը բարեպաշտական սովորութիւն մ'էր, որդիք, եղբարք, ազգականք, բարեկամք, ծառայք, մէկ խօսքով բոլոր անոնք որ վախճանելոյն հետ ազգականութեան և կամ սիրոյ կապով մը միացեր էին, դիակին չորս կողմն առած՝ հեծութիւն և արտասուք մեծ խնամով մարմնոյն ա-ճիւնքը կ'ամփոփէին և վիմով կը ծածկէին զսափորն որ իրենց մոխրին այն յետին քաղցր մնացուածը կը պահէր։ Ընդհակառակն հոս այրողներէն զատ ուրիշ ոչ ոք վշտացեալ կը տեսնես վախճանելոյն վրայ. վասն զի, ինչպէս որ լաւ դիտեցի, մեռելոյն յուղարկաւորութեան ժամանակ հազիւ ազգական մը միայն հոն ներկայ կը գտնուի։

» Դարձեալ, Հնդկաստանի ոչ միայն այս կողմը՝ այլ և ամեն դին բնաւ մեռելները չեն պատուեր. կը ջանան՝ որչափ կարելի է՝ մեռելը տնէն շուտով դուրս հանելու. և այս ալ այնպիսի աճապարանքով կ'ընեն որ յաճախ չմեռած մարդիկներ անգամ կը բերեն գետափին վրայ կը դնեն. որոնք եթէ զգաստանան ու առողջանան՝ չեն կրնար նորէն քաղաք մտնել. հապա պէտք է որ երթան մասնաւոր իրենց համար շինուած գանգէս գետոյն եզերքը գիւղ մը և մինչև ցմահ հոն կենան։

» Ժամանակաւ կրնային հուկլիին որ և է կողմն այրել իրենց մեռելները. այլ հիմա վերի ըսած տեղերնէս զատ՝ տէրութենէն խստիւ արգելուած է որ բընաւ ուրիշ տեղ մը չկարենան այն ա-բարողութիւնը կատարել։

» Երբոր թողուցի այն տխուր տեղուանքը և մաքուր օդ մը սկսայ ծծել, այն ատեն միայն զգացի թէ ինչպիսի ապականեալ հոտով զգեստներս թաթխուեր էին »։